600.0052.05.09.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2003 թվականի №52Ա
քաղ.Երևան

«ՁՈՐԱՀԷԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N55Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N17Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետը և 27-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության գույքը պայմանագրային կարգով վարձակալության հանձնելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:
2. Ուժը կորցրած ճանաչել՝
   ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հուլիսի 31-ի ««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը «ՁորաՀԷԿ»-ում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N55Ա որոշումը:
   բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի մարտի 17-ի ««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» N17Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ**

Ք.Երևան
5 սեպտեմբերի 2003 թ.
ժամը 17^{00}